Արձանագրություն N 2

ՀՀ ԿԱ ՊԵԿ-ԳՀԱՊՁԲ-2017/4 ծածկագրով գնումների էլեկտրոնային համակարգի (ARMEPS) միջոցով գնանշման հարցման ընթացակարգով ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կարիքների համար ավտոպահեստամասերի (սնուցման մարտկոց) ձեռքբերման գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան 13 սեպտեմբերի 2017 թ.

ժամը 11:00

Մասնակցում էին գնահատող հանձնաժողովի նախագահ՝ Կարեն Գևորգյանը, անդամներ՝ Լևոն Հարությունյանը, Արթուր Մանուկյանը, Դավիթ Շատվերյանը, Գայանե Օսիպյանը, քարտուղար՝ Սպարտակ Հարությունյանը և «Վարմէքս» ՍՊԸ-ի տնօրեն Մկրտիչ Խաչատրյանը :

<u>Օրակարգ</u>

<u>Հայտերի բացման և ուսումնասիրման մասին</u>

ՀՀ ԿԱ ՊԵԿ-ԳՀԱՊՁԲ-2017/4 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նախագահ Կարեն Գևորգյանը նիստը հայտարարեց բացված: Հայտերի վերջնաժամկետին հայտ են ներկայացրել ներքոհիշյալ մասնակիցները

Հ/Հ	Մասնակցի անվանումը		Նախահաշվային գին /ՀՀ դրամ /
	«Վարմէքս» ՍՊԸ	«Ֆլեշ Մոտորս» ՍՊԸ	
	ԱԱՀ վճարող	ԱԱՀ վճարող	
	Գնային առաջարկ /ՀՀ դրամ առանց ԱԱՀ/		
1	1 416 667	1 208 333	1 700 000
2	600 000	-	680 000

Հանձնաժողովը ուսումնասիրեց և արձանագրեց, որ՝

- հայտերում առկա են պահանջվող փաստաթղթերը, որոնք կազմված են հրավերով սահմանված պահանջներին համապատասխան:

Հաշվի առնելով, որ 2-րդ չափաբաժնի մասով հայտ է ներկայացրել միայն «Վարմէքս» ՍՊԸ-ն և նրա կողմից առաջարկված գինը գերազանցում է նախահաշվային գնին, ուստի հանձնաժողովը քննարկեց և որոշեց «Վարմէքս» ՍՊԸ-ի տնօրենի հետ, որը ներկա էր գնահատող հանձնաժողովի բացման նիստին, վարել գնի նվազեցման բանակցություն: Բանակցության արդյունքում «Վարմէքս» ՍՊԸ-ի տնօրեն Մկրտիչ Խաչատրյանը համաձայնվեց գինը նվազեցնել՝ սահմանելով 680 000 ՀՀ դրամ (ներառյալ ԱԱՀ-ն):

«Վարմէքս» ՍՊԸ-ի տնօրեն

Հանձնաժողովը քննարկեց և որոշեց հայտերի գնահատումն իրականացնել նույն նիստի ընթացքում: Իրականացված գնահատման արդյունքում հանձնաժողովը որոշեց՝

- «Ֆլեշ Մոտորս» ՍՊԸ-ին ճանաչել որպես 1-ին տեղ զբաղեցրած մասնակից 1-ին չափաբաժնի մասով:

- «Վարմէքս» ՍՊԸ-ին ճանաչել որպես 1-ին տեղ զբաղեցրած մասնակից 2-րդ չափաբաժնի մասով, և 2-րդ տեղ զբաղեցրած մասնակից՝ 1-ին չափաբաժնի մասով:

Հանձնաժողովը որոշեց 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցներին ծանուցել և առաջարկել 3 (երեք) աշխատանքային օրվա ընթացքում ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող ՀՀ ԿԱ ՊԵԿ-ԳՀԱՊՁԲ-2017/4 ծածկագրով գնման հրավերի 2-րդ մասի հայտ պատրաստելու հրահանգի 3-րդ բաժնով նախատեսված փաստաթղթերը ու առաջարկված ապրանքի (ապրանքների) ամբողջական նկարագիրը:

Սահմանված կարգով էլեկտրոնային եղանակով հարցում կատարել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների վերաբերյա՝ ներկայացնելով հարկ վճարողի հաշվառման համարը:

Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել ոչ ուշ քան վերոհիշյալ փաստաթղթերը հանձնաժողովի անդամներին տրամադրվելուն հաջորդող 3-րդ աշխատանքային օրը, ժամը 11:00-ին, ՀՀ ք. Երևան, Մ.Խորենացու-3 հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

Գնահատող հանձնաժողովի

նախագահ _____ Կարեն Գևորգյան

անդամներ _____ Լևոն Հարությունյան

_____ Արթուր Մանուկյան

_____ Դավիթ Շատվերյան

_____ Գայանե Օսիպյան

քարտուղար _____ Սպարտակ Հարությունյան